

**«ONLINE» վարկատեսակի տարեկան փաստացի տոկոսադրույքի
հաշվարկման կարգը**

Տարեկան փաստացի տոկոսադրույքի բանաձևի հաշվարկման բացատրություններ

Բանկը իր կողմից տրամադրած վարկի դիմաց հաշվարկում է տարեկան փաստացի տոկոսադրույք (Annual Percentage Rate կամ APR)՝ սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախս՝ արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով և հաշվարկված՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

- **i** – տարեկան փաստացի տոկոսադրույք,
- **A** – վարկի սկզբնական գումար,
- **n** – վարկի մարմանն ուղղված վճարի թիվ,
- **N** – վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվ,
- **K_n** – վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումար,
- **D_n** – վարկի տրամադրման օրվանից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատված՝ արտահայտված օրերի թվով:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ

Ենթադրենք բանկը սպառողին տրամադրում է «Online» սպառողական վարկ հետևյալ պայմաններով՝

- Վարկի գումար – 500,000 ՀՀ դրամ,
- Անվանական տարեկան տոկոսադրույքը – 14 %,
- Վարկի մարման ժամկետը – 12 ամիս,
- Վարկի մարման եղանակը – անուիտետային (վարկի գումարի և տոկոսագումարի հանրագումարը մարվում է ամենամսյա հավասարաչափ),

Վարկի տրամադրման դիմաց առկա են վճարներ՝

- Վարկի սպասարկման միանվագ վճար – 20,000 ՀՀ դրամ
- Վարկի կանխիկացման վճար – 1000 ՀՀ դրամ (վարկի գումարի 0.2 %),

Անուիտետային եղանակով վարկի մարման դեպքում անհրաժեշտ է որոշել վարկի մարմանն ուղղված ամսական վճարի գումարը, հետևյալ բանաձևով՝

$$K = A \times \frac{(1+R)^P \times R}{(1+R)^P - 1}$$

Որտեղ՝

- **K** – ամսական վճար,
- **A** – վարկի սկզբնական գումար,
- **R** – տոկոսագումար (նշվում է ամսական տոկոսադրույքը, օրինակ՝ $(14/12)/100=0.0116$)
- **P** – վարկի մարման ժամկետ (ամիսներով),

Յուրաքանչյուր ամիս վարկի մարման գծով ամսական վճարը կկազմի՝

$$500,000 \times \frac{(1+0.0116)^{12} \times 0.0116}{(1+0.0116)^{12} - 1} = 44,894$$

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկելու համար որպես K_1 լրացվում են բոլոր տեսակի միանվագ վճարվող վճարները ($K_1 = 20,000 + 1,000 = 21,000$):

Այսպիսով՝ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կհաշվարկվի հետևյալ կերպ՝

$$500,000 = \frac{21,000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{44,894}{(1+i)^{\frac{30}{365}}} + \frac{44,894}{(1+i)^{\frac{61}{365}}} + \dots + \frac{44,894}{(1+i)^{\frac{365}{365}}}$$

$$i = 0.2477 \times 100 = 24.77\%$$

Բանկի կողմից առաջարկվող վերոհիշյալ պայմաններով վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի 24.77 %: